Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «Ազատեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց պատմության (2դասաժամ), հասարակագիտության (2դասաժամ), շախմատի (4 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարերի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն թվականի հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 14:00-ին**, Վայոց ձորի մարզի Ազատեկի միջնակարգ դպրոցում. հասցեն Վայոց ձորի մարզ, գյուղ Ազատեկ 14-րդ փողոց 11 փակուղի:

Հարցերի համար զանգահարել 098108060 հեռախոսահամարին: